«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՀՀ ք.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +374-41-777-983
Էլ. հասցե՝easm.himnark@gmail.com

№55-L

«21» ապրիլի 2025թ.

ՀՐԱՄԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (այսուհետ՝ Գնորդ) և «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025 թվականի փետրվարի 27-ին կնքված N ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/16-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը պայմանագրով Գնորդին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզել է, որ սահմանված ժամկետներում Վաճառողը չի ապահովել ապրանքի մատակարարումը:

Տվյալ դեպքում «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից 01.04.2025 թվականին «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊ ընկերությանն է հասցեագրվել գրություն՝ որ սույն թվականի ապրիլի 1-ի դրությամբ՝ 1-ին եռամսյակի համար նախատեսված 1-ին և 2-րդ չափաբաժինների ապրանքները

մատակարարված չեն և հիմք ընդունելով ապրանքի խիստ անհրաժեշտությունը՝ պայմանավորված Երևան քաղաքում սանմաքրման աշխատանքները պատշաճ կազմակերպելու հանգամանքով, առաջարկվել է մինչև սույն թվականի ապրիլի 10-ը մատակարարել ապրանքը, այնինչ ներկայացված գրությանը որևէ ընթացք չի տրվել և «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊ ընկերության կողմից պայմանագրով նախատեսված 1-ին և 2-րդ չափաբաժինների ապրանքը չի մատակարարվել:

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջով՝ միակողմանի /մասնակի/ լուծել է կնքված պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի ապրիլի 11-ին և պայմանագիրը ապրիլի 12-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 2-րդ մասով՝ «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ **ՍԱՇԱ ԿԱՏՎԱԼՅԱՆ**